ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԽՍՀ-ՈՒՄ, ԼՂԻՄ-ՈՒՄ, ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՍԱՀՄԱՆԱՑԻՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ ՀԱՅ ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԲԱՆԱԿՈՒՄ ՀԱՅԱԶԳԻ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Գերագույն խորհուրդը **որոշում է.**

1. Եկնելով ռեգիոնում ստեղծված լարված իրավիճակից և նկատի ունենալով, որ հայ բնակչության նկատմամբ Ադրբեջանի տարածքում կատարվող բռնությունները, հալածանքներն ու սպանությունները մինչև այժմ ձեռնարկված միջոցառումներով չեն կանխվում, Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը դիմում է ԽՍՀՄ Գերագույն խորհրդին, պահանջելով հրավիրել ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների արտահերթ համագումար՝ այդ հարցը քննարկելու և հայ բնակչության կյանքի անվտանգության ապահովման համար գործուն միջոցներ իրականացնելու նպատակով:

2. Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը դիմում է ԽՍՀՄ Գերագույն խորհրդին՝ քննության առնելու Ադրբեջանական ԽՍՀ Շահումյանի շրջանի և Գետաշենի ենթաշրջանի ժողովրդական դեպուտատների տեղական խորհուրդների որոշումները, որոնք հիմնականում պայմանավորված են տեղի հայ բնակչության կյանքին սպառնացող իրական վտանգով:

3. Հանրապետության սահմանային շրջաններում Հայկական ԽՍՀ վարչական մարմինների մասնակցությամբ անցկացնել ժողովրդական դեպուտատների շրջանային խորհուրդների արտահերթ նստաշրջաններ՝ սահմանամերձ շրջանների բնակչության կյանքն ու անվտանգությունն ապահովող համատեղ միջոցառումների ծրագիր մշակելու նպատակով:

4. Հաշվի առնելով, որ ազգային պատկանելության հողի վրա խորհրդային բանակում վերջին մեկուկես տարում արձանագրվել են հայազգի զինծառայողների սպանության, հալածանքի ու ծեծի բազմաթիվ դեպքեր, Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը դիմում է ԽՍՀՄ Գերագույն խորհրդին՝ զորամիավորումներում ծառայող հայազգի զինծառայողների կյանքի ապահովության իրական երաշխիքներ ստեղծելու պահանջով:

5. Հանձնարարել Հայկական ԽՍՀ դատախազությանը՝ Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի ներկա նստաշրջանում ինֆորմացիա տալ հանրապետության տարածքում կատարված զանգվածային թունավորումների և դրանց հետաքննության արդյունքների մասին:

Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ՝ Հ. ՈՍԿԱՆՅԱՆ

Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության քարտուղար՝ Ն. ՍՏԵՓԱՆՅԱՆ

17 սեպտեմբերի 1989 թվականի, քաղ. Երևան